

## ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

### Վճարումներ ՀՀ դրամով

ՀՀ դրամով վճարումներ իրականացնելիս անհրաժեշտ է բանկի հետ համաձայնեցված ձևով ներկայացնել վճարման հանձնարարականներ: Պատշաճ ձևով ներկայացված հանձնարարականը պետք է ներառի շահառուի անունը/անվանումը, հաշվեհամարը, շահառուի բանկի անվանումը: Շահառուի հաշվեհամարը պետք է բաղկացած լինի առավելագույնս 16 նիշից, որից առաջին հինգը բանկին կամ նրա մասնաճյուղին ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված կոդն է:

### Միջազգային վճարումներ

Արտասահման փոխանցումներն արագ և շահավետ իրականացնելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ տեղեկությունները՝

- շահառուի (ստացողի) անունը/անվանումը և հասցեն,
- շահառուի հաշվեհամարը կամ միջազգային բանկային հաշվեհամարը (IBAN),
- շահառուի բանկի անվանումը, հասցեն, հնարավորության դեպքում՝ նաև SWIFT կոդը,
- փոխանցվող գումարը, արտարժույթը և նպատակը,
- փոխանցողի անունը/անվանումը:

Արտասահմանից փոխանցումներ ստանալու համար Ձեզ անհրաժեշտ է փոխանցող կողմին նախապես տրամադրել հետևյալ տվյալները՝

- Ձեր անունը/անվանումը, հաշվի համարը ԱրմՍվիսԲանկում, որը ճշգրիտ կերպով ներկայացված է հաշվի բացման և վարման պայմանագրում կամ հաշվի քաղվածքում,
- ARMSWISSBANK CJSC անվանումը, հասցեն, ինչպես նաև SWIFT կոդը՝ ARSJAM22:

Նախընտրելի է փոխանցող կողմին տրամադրել նաև միջնորդ բանկի տվյալները, որը հանդիսանում է ԱրմՍվիսԲանկի թղթակից բանկը: Վերջիններիս վերաբերյալ տվյալներին կարող եք տեղեկանալ Ձեր անհատական մենեջերից կամ ԱրմՍվիսԲանկի հիմնական թղթակից բանկերի ցանկից:

### Միջնորդավճարներ

ԱրմՍվիսԲանկը, ինչպես նաև արտասահմանյան բանկերը, միջազգային փոխանցումներ իրականացնելիս գանձում են միջնորդավճարներ: Գանձվող գումարը կախված է յուրաքանչյուր երկրում գործող փոխանցումների իրականացման պրակտիկայից:

Ձեր և շահառուի միջև ծախսերը կարող են բաշխվել հետևյալ կերպ.

- Եթե Ձեզ անհրաժեշտ է, որ շահառուն ստանա ամբողջական գումարը և նրանից որևէ միջնորդավճար չգանձվի, ապա Ձեզ անհրաժեշտ է վճարման հանձնարարականում ընտրել միջնորդավճարների վճարման OUR տարբերակը: Այդ դեպքում Ձեր հաշվեհամարից նախապես կգանձվեն բոլոր տեսակի ծախսագումարները:
- Դուք վճարում եք միայն ԱրմՍվիսԲանկի միջնորդավճարները, իսկ շահառուն վճարում է իր և ցանկացած այլ միջնորդ-բանկերի ծախսերը, որոնք գանձվելու են անմիջապես փոխանցվող գումարից: Այս դեպքում Ձեզ անհրաժեշտ է վճարման հանձնարարականում ընտրել միջնորդավճարների վճարման BEN տարբերակը: